

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑՈՒ ՄԻ ԶԱՓԱԾՈ ԱՆԵԾՔԻ ՄԱՍԻՆ

17-րդ դարի հայ տաղասաց-երգիծարան, քաղաքական ու եկեղեցական գործիչ Մարտիրոս Ղրիմեցու ստեղծագործության ձևազարային նմուշները հաճախ մեր ուշագրությունը գրավեց մի հետաքրքիր շափածո անեծք, որը կարևոր է իր գրական և պատմական արժեքով:

Անեծքը պահպանվել է Հայաստանի Պետական Մատենադարանի № 3860 (Ա) և 8908 (Բ) ձևազրկում: Ա ձևազրկում անեծքն ունի հետևյալ խորագիրը. «Ղրիմցի թաթար Մարտիրոս վարդապետին շինած ոտանաւորն է», իսկ Բ ձևազրկում արտադրված է առանց խորագրի ու հեղինակի անվան հիշատակության: Երկու ձևազրկում էլ այդ բնագիրն ընդօրինակված է Մարտիրոս Ղրիմեցուն պատկանող ստեղծագործությունների շարքում: Մատենադարանի աշխատակիցների կողմից կազմված տաղերգուների ձևազրկ ցուցակի մեջ ևս այն գրված է Մարտիրոս Ղրիմեցու անվան տակ:

Անեծքը, որպես հայ միջնադարյան երգիծանքի առանձին տեսակ, ուշադրության գրեթե չի արժանացել, այնինչ նա ունի որոշ ճանաչողական նշանակություն և բավական լայն կիրառում է ստացել ժողովրդական ստեղծագործության ու գրավոր պոետիայի մեջ: Հիշենք Արտաշեսի և Դավթի անեծքները, անեծք-հայրեններ, Ներսես Շնորհալու անեծքը «Ողբ Եղեսիոյ»-ի մեջ և այլն:

Ժողովուրդը միջնադարում հավատ է ունեցել անեծքի հրաշագործ ուժի նկատմամբ:

Բնության և մարդկային կյանքի մեջ արտահայտվող շար կամ բարի երեվույթները հասկանալու, դրանք կանխելու կամ հօգուտ մարդու օգտագործելու համար հավատացել են, թե անհրաժեշտ է դանել այն խորհրդավոր բանաձևը, որով հնարավոր է իբր զսպել այդ ուժերը և փրկապետել նրանց: Ժողովրդական բազմաթիվ հեքիաթներում հերոսները շշնշում են այնպիսի կախարդական խոսքեր, որով շարը հաղթահարվում է, հրեշք տապալվում, բացվում են փակ դռներ ու դարբասներ և այլն: Այս հիմքի վրա ստեղծվել է հատուկ աղթարական գրականություն, որն իր մեջ պարունակում է զանազան հրաշագործ բանաձևեր, խորհրդավոր ու տարօրինակ աղոթքներ, որոնց միջոցով հավատացել են թե կարելի է դեերին հալածել կամ ոգեկոչել, շարը խափանել կամ արձակել և այլն:

Հնագույն ըմբռնումների հիման վրա խարսխված այդ հավատալիքի տարածված լինելու օգտին են խոսում հայ ժողովրդի տարբեր հատվածների կենցաղում կիրառվող այս կարգի բազմաթիվ արտահայտություններ՝ մեղքի ու անեծքի տակ մի ընկնիր, շար անեծքը շար օձի թույն է, անիծյալ լինիս, մոր անեծքը չի բռնի, անիծից արմատ, շար անեծքի հանդիպիս, անեծքի բուն դառանք և այլն:

Այն հավատը թե անհեծքը կրոնի, ստիպել է մարդկանց դիմելու նրան իբրև ազդու գեներ թշնամու գեմ, երբ պայքարի ուրիշ միջոց չի եղել, նույն հավատով՝ ժողովրդի գլխին եկած դժբախտություններից շատերը վերագրվել են որևէ շար անհեծքի և այլն:

Մ. Ղրիմեցու մեր ուշադրությունը գրաված անհեծքը մի հետաքրքրական նմուշ է, գրված տների այբբենական հաջորդականությամբ՝ Ա-ից մինչև Օ: Յուրաքանչյուր տառով սկսվող տունը վեց կարճ հնգավանկ տողից է բազկացած: Այսպես՝

| | |
|-------------------|------------------|
| Արբանեակ շարին, | Աչքըդ կուրասցին, |
| Անիծեալ կուրին, | Ականջըդ խլցին, |
| Այս անուն պրդծին, | Ազգդ ջընջեսցին: |

Բանաստեղծության այս ձևը հեղինակի համար ստեղծել է ակնհայտ դժվարություն: Որոշ տառերով սկսվող համապատասխան քանակությամբ բառեր, որոնք բացասական իմաստ արտահայտեին՝ հայերենում հազվագյուտ են: Դրա համար հեղինակը ստիպված է եղել գործածելու օտարազգի կամ դժվարամատչելի բառեր, որոնք սակայն, գրեթե առանց բացատրության, կան նրիմիա վարդապետի բառարանում (կազմվել է 17-րդ դարում և իր մեջ հազվագյուտ բառեր է պարունակում): Ղրիմեցին անշուշտ ձեռքի տակ է ունեցել այդ բառարանը և շատ հաճախ դիմել նրան: Մեր միջնադարյան բանաստեղծության մեջ այդպիսի մի ուրիշ օրինակ ևս կա: 18-րդ դարի սկզբի պատրիարք-բանաստեղծ Գրիգոր Շղթայակրից պահպանվել են երեք ոտանավորներ՝ գրված նրեմիայի բառերով: Դրանք բոլորն էլ դժվարընթեռնելի և հանելուկային բնույթ ունեն: Շղթայակրը հենց այդպիսի նպատակ է հետապնդել: Բայց Մարտիրոս Ղրիմեցին նրեմիային դիմում է ոչ թե խրթնարանություններ հորինելու համար, այլ սոսկ անհրաժեշտությունից: Օրինակ «Փ»-ով սկսվող շարքը նա լրացնում է այսպես.

| | |
|---------------|-----------------|
| Փարաք կատաղի, | Փաթուր փանաքի, |
| Փաղաղ յօժարի, | Փառքդ կորնչի, |
| Փիծ ապաւառի, | Փաղփինդ խաւարի: |

Այնտեղ, ուր Ղրիմեցին չի դիմում բառարանի օգնության, ժողովրդական շունչն ավելի է զգալի:

Չնայած արհեստական բառերի առկայության, անհեծքն ունի գեղարվեստական որոշ արժանիք:

Բերենք նմուշի համար մի երկու օրինակ, առանց նկատի ունենալու տների հաջորդականությունը.

| | |
|--------------------|-------------------|
| Խլուրդ դարշելի, | Մնունդ կայէնի, |
| Խանդարիչ երկրի, | Մոցածին որդի, |
| Խելագար շորի, | Մուսլիզ անթափ ձի, |
| Խորհուրդդ ցըրուփ | Մառըդ շորասցի, |
| Խելքդ ցնորի, | Մաղիկդ թօթափի, |
| Խաղք լիցիս յերկրի: | Մունկդ կտրատի: |

¹ Հ. Անասյան, Գրական նմուշներ Գրիգոր Շղթայակրից, «Էջմիածին», 1950, էջ 39—46:

Պտուղ գարշելի
Պղծոյն Յուդայի
Պատժակից որդի:

Պիղծ լեզուդ համրի,
Պապանձեալ կարկի,
Պապակեալ այրի: Եվ այլն:

Յուրաքանչյուր տուն իր նույնահունչ բառերի կարճ, հատու և զորեղ հատվածներով ազդու է դարձնում անեծքի ուժը, և երբ տները, որոնց հետ և հնչականութունը, փոխվում է, ավելի է ծանրանում անեծքի տպավորութունը: Կարծես հոգուց բխում է մի անվերջ հորդացող լավա, որը որպես մաղձ, թույն և խանձող խորշակ թափվում է մեղավորի գլխին: Որքան շարունակվում է անեծքը, այնքան բուռն և հորդուն է դառնում շարության զգացումը շարի գեմ, և անեծքի, այսինքն անընդհատ հաջորդվող հարվածների տեսականութունը ոչ թե հոգնեցնում, ձանձրացնում է, այլ ավելի է առաջ մղում:

Անեծքը վերջացնելուց հետո մարդ տոգորվում է այն հավատով, թե շարը հաղթահարված է:

Ինչպես երևում է Ղրիմեցու անեծքը ուժեղ տպավորություն է թողել մարդկանց վրա և լայն տարածում գտել: Կարճ ժամանակում գրիչների մոտ տարբերակները շուտով վարիանտների բնույթ են ստացել և ներկայացնում են բավականաչափ հետաքրքիր պատկեր: Ահա մի օրինակ.

Ճաղար ծակամուտ,
Ճրճուողական սուտ,
Ճրն[ճ]ղուկ վավաշուտ,
Ճոխարան լեզուդ,
Ճոռոմ բերանուդ,
Ճանկրդ քո որդնուտ:

(Չեռագիր Ա.)

Ճիւաղդ յայտնի,
Ճեռոտ ախտալի,
Ճակաճան լիտի,
Ճաճանչդ նուաղի,
Ճեպով կործանի,
Ճակատդ ի հողի:

(Չեռագիր Բ.)

Բ ձեռագրում կա նույն անեծքի համառոտումը (յուրաքանչյուր տնից վերցված մի տող) և ուրիշ անեծքներ ու ոտանավորներ նրա նմանությամբ գրված:

Բայց անեծքի լայն տարածումը դրանով չի սահմանափակվում: Նա ծառայել է իր նպատակին: Ղրիմեցին անեծքը գրել էր ընդհանուր դործածության համար, առանց գեմքի նշման¹, այնպես որ յուրաքանչյուր ոք կարող էր այն ուղղել հասարակական կամ անձնական իր թշնամուն: Որ այդ անեծքի սկզբնօրինակը չի հասցեագրված եղել որևէ մեկին կարելի է ենթադրել Բ ձեռագրի բնագրի հիման վրա: Անեծքը սկսվում է այսպես.

Արբանեակ շարին,
Անիծեալ լրբին,
Այս անուն պղծին:

¹ Կարելի է կարծել նաև, որ Ղրիմեցին իր անեծքն ուղղել է պատմական անձնավորության՝ մի ոմն Արբահամ Այնթափցու, որը 1680 թվականին հիշվում է իբրև Երուսաղեմի միարան և Ս. Հարություն տաճարի պաշտոնյա, իսկ հետո վերագրվել է Արբահամ Այնթափցի Մովսիսին:

«Այս անունն պղծին» տողը ցույց է տալիս, որ հեղինակը կամ մեզ հասած ձեռագրերի նախագաղափար օրինակի գրիչը որևէ մեկին նկատի չունի և յուրաքանչյուր ոք կարող է մուծել այնտեղ իր ցանկացած անունը: Այդպես էլ վարվել են: Ա. ձեռագրի օրինակն այսպիսի այլընթերցում է տալիս.

Արրանեակ շարին,
Անիծեալ կուրին,
Ազրահամ պղծին:

Ազրահամը Արրահամ անվան միտումնավոր աղավաղումն է, որը կատարված է վիրավորական իմաստ տալու համար այդ անվանը: Դա պարզ երևում է նաև հետևյալ ծանոթությունից, որը գրված է Ա. ձեռագրի բնագրի տակ.

| | |
|-----------------------------|------------------------------|
| Զի մինչև ցաստ բանք որ գրբին | Պիղծ, գարշելի նէքսէթ ժանդին. |
| էր ի վերայ Արրահամին, | Արդ սակաւուկ բանքս լիցին |
| Որ էր նա գիւտ ամեն շարին, | Յանդիմանօղբ նորա շարին: |

Ուրեմն անեծքը ուղղված է մի ոմն Արրահամի, որը համարվում է ամեն շարի գյուտ: Բայց ո՞վ է այդ անձնավորությունը: Բ. ձեռագրում անեծքների «Մ»-ով սկսվող շարքի մեջ ասված է «Մուռ վիզ Անթափցի», որից և պարզվում է, թե դա կաթոլիկ գործիչ Արրահամ Այնթափցի Մովսիսյանը կամ Արծիվյանն է, որն իրեն կաթողիկոս հռչակեց 1740 թվականին:

Այնթափցին ծնվել է 1679 թվականին, իսկ Մարտիրոս Ղրիմեցին մահացել 1683 թվականին: Եթե նույնիսկ բնդունենք, որ նա իր շափածո անեծքը գրել է մահվան տարին, ապա այդ ժամանակ Արրահամ Այնթափցին հաղիվ չորս տարեկան էր: Պարզ է, որ Մարտիրոս Ղրիմեցին ոչ մի աննշտություն չէր կարող ունենալ կաթնակեր մանկան հետ և նրան չէր ուղղի այդ երկարաշունչ և թունոտ անեծքը:

Անեծքը կոնկրետ բնույթ է ստացել և իբրև դենք ծառայել կաթոլիկական եկեղեցու սոնձգությունների դեմ, հավանաբար 18-րդ դարի 20-ական թվականներին, երբ սկսվում է Արրահամ Արծիվյանի եռանդուն գործունեությունը կաթոլիկ եպիսկոպոսներ օծելու, քարոզիչներ առաքելու և հակաթոռ կաթողիկոսություն ստեղծելու ուղղությամբ: Արծիվյանն այսպիսով քառատում էր հայ ժողովրդի և եկեղեցու միասնությունը: Արծիվյանի գործունեությունը լիակատար համահնչուն էր արևելյան բրիտանական թեմերի նկատմամբ պապական շահերի հետ: Ահա թե ինչու Բենեդիկտոս ԺԳ պապը այնքան մեծ հետաքրքրություն է ցուցաբերում և ամեն կերպ խրախուսում նրան: Արրահամ Արծիվյանը փաստորեն պապի գործակալն էր Արևմտյան Հայաստանում:

Պարզ է, որ նրա դեմ պետք է բարձրանար բողոքի և հակառակություն ալիք: Մովսիսյանն է ուժեղ պայքար Արծիվյանի վտանգավոր միտումներին դիմակայելու համար: Նրա մոլեգին գործունեությունը շափազանց է համարվում նույնիսկ կաթոլիկական պրոպագանդայի տեսակետից: Ֆրանսիայի դեսպան Բոնակը իր մի նամակում գրում է. «Եթե Հալեպի միսիոնարներից մի քանիսը Արրահամ եպիսկոպոսին մղած շիննին անխորհուրդ քայլերի... այսօրվա գրություն հասած չէինք լինի»¹: Նույն դեսպանը Ֆրանսիայի թագավորին

¹ Documents inédits pour servir à l'histoire du christianisme en Orient (XVII—XIX siècles), par le P. Antoine Rabbath, Paris, 1907, էջ 557:

ուղղած իր նամակում նշում է, որ Աբրահամը և Սայդայի մի հույն կաթողիկե կախկոպոս իրեն անհասկանալի մնացած ղիտումներով ղրիմեցին այնպիսի քայլերի, որոնք վերարժարժեցին գրեթե հանգած կրակը¹:

Արժիվյանն ուղղակի շեղաբացվում է և նրա գործունեությունը ամփոփվում է համախոհների նեղ շրջանակի մեջ: 1740 թվականին նրա կաթողիկոսանալը փաստորեն տիկնիկախաղ էր (նա ինքը նախօրոք օժում է մի քանի կախկոպոսների և նրանց ձեռքով օժվում կաթողիկոս)²: Չնայած այդ բանին, նրա շուրջը կաթողիկե գործիչների կողմից ստեղծվել է մի ամբողջ գրականություն, որտեղ նա ներկայացվում է իբրև բարձր գաղափարների համար անխոնջ պայքարող հերոս, որը վայելել է իբր ժողովրդի համակրանքը և այլն³:

Պատմական ճշմարտությունը սլարգելու տեսակետից այս անեծքը պերճախոս է: Տարակույս չի մնում, որ ժամանակակիցներից շատերը անհուն ատելություն ու արգահատանք են տածել Արժիվյանի նկատմամբ: Բացի քննության ենթակա անեծքից Պետ. Մատենադարանի № 8908 (Բ) ձեռագրում կան երկու այլ ոտանավորներ, որոնք նույնպես գրված են Աբրահամի դեմ ոմն Սիմեոն արեղայի կողմից և մի անանուն անեծք (Ղրիմեցու անեծքի նմանողությամբ), որը դարձյալ ամենայն հավանականությամբ ուղղված է Աբրահամ Արժիվյանի դեմ⁴:

Այն բանից հետո, երբ Մարտիրոս Ղրիմեցու այս անեծքը հարմարեցվել է Աբրահամ Այնթափցուն՝ բնագրի մեջ մտել են որոշ փոփոխություններ: Այսպես, «Ծ»-ով սկսվող շարքի մեջ «ծուռ վիզ Անթափցի» արտահայտությունը⁵, ինչպես և նման մի քանի այլ արտահայտություններ՝ նորմոթություն են, իսկ անեծքի դավանական բնույթը դալիս է Ղրիմեցուց:

Կաթողիկե միսիոնարներին խժոժությունները Հայաստանում և հայկական գաղթավայրերում 17-րդ դարում արդեն լայն ծավալ էին ստացել: Այդ վնասակար գործունեությունը ազգային գործիչների կողմից համարվում էր հասարակական շարիք: Անեծքն էլ ուղղված է հենց այդ շարիքի դեմ: Անեծքի մեջ արտահայտվում է Մարտիրոս Ղրիմեցու խիստ բացասական վերաբերմունքը և անհաշտ պայքարը կաթողիկոսության նկատմամբ:

Հայանի է, որ Ղրիմեցին Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի համախոհներից էր: Զուղայեցին, երբ 1679 թվականին եկավ Կ. Պոլիս քաղաքական առաքելու-

¹ Documents inédits pour servir à l'histoire du christianisme en Orient (XVII—XIX siècles), par le P. Antoine Rabbath, Paris, 1907, էջ 56 3:

² Օրմանյան, Ազգապատում հատ. 2, էջ 2009:

³ Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա. (մամուլի տակ): Չնայած իրեն հայտնի եղող աղբյուրների միակողմանիությանը՝ Հ. Անասյանը ճիշտ է տվել Աբրահամի հասարակական գործունեության բնութագրերը:

⁴ Սիմեոն արեղայի ոտանավորներից մեկը «Սիմեոն Արեղայի ստացեալ վասն Անթափցի Աղբահամին» խորագրով հետաքրքիր բովանդակություն ունի:

Ի յԱնթափու եկեղեցին՝ Աստուածածնի սուրբ տաճարին

Մկրտեցար յաւազանին, ով նգովեալ պիղծ աղբահամ.

Սուրբ մեռնաուն մեր օծար և Աբրահամ անուանեցար

Չմեր սուրբ օրէնքն մուսցար, ով ուբացող պիղծ աղբահամ:

Այսպես է սկսվում Սիմեոնի երկարաշունչ ոտանավորը, որի յուրաքանչյուր երկրորդ և չորրորդ տողի վերջում կրկնվում է «աղբահամ»-ը մի որևէ մակդրի հետ միասին: Բայց զա անեծք չէ, այլ մի երգիծական շափածո ղրիմանկար:

⁵ Այս արտահայտությունը մյուս բնագրում սրամիտ բառախաղի բնույթ է ստացել՝ ծուռ վիզ անթափ ձի, այսինքն թափ չունեցող ձի:

թյան (որի պատվիրակության մեջ մտնում էր նաև երիտասարդ Իսրայել Օրին), անմիջապես սկսեց գործակցել Ղրիմեցու հետ, մի մարդու, որը, անշուշտ, ճանաչված էր իբրև կաթոլիկ նկրտումների անհաշտ հակառակորդ¹: Դա արդեն խոսում է այն կեղծ վարկածի դեմ, թե Ջուղայեցու առաքելության նպատակըն է եղել ընդունել կաթոլիկ դավանանք:

Այսպիսով, Մարտիրոս Ղրիմեցու շափածո անեծքը իր փոփոխակով հանդերձ հետաքրքրական է որպես գրական երկ և արժեքավոր՝ պատմական բովանդակությամբ:

¹ Ղրիմեցին ամենուր հալածել և բանազրել է կաթոլիկացած տարրերին: Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը իր «Օրագրության» մեջ այսպիսի վկայություն ունի. «Ի սուրբ Աստուածածին գնացի և Մարտիրոս վարդապետն բարոզ սասց և դաս բաշեց ըզՖրանկսն և զհաւանողսն նորին» (Երեմիա Քէոմուրճեան, Օրագրութիւն, Երուսաղէմ, 1939, էջ 178):